

02/10.1/21988-17 2017-10-09

AJV-41-32 2017-09-28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Սաղաթեյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-121-30.08.2017-SՀ-011/0*) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի հոկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1092-Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-121-30.08.2017-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված նախագծով քննարկվող գործող օրենքի 78-րդ հոդվածը թողնել անփոփոխ՝ նկատի ունենալով հետևյալ հանգամանքները՝

1. Նախագիծը հակասում է ԵԱՏՄ միասնական օրենսդրությամբ սահմանված՝ ԵԱՏՄ անդամ պետությունների և երրորդ երկրների միջև առևտրում անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման իրավական կարգավորումներին: Մասնավորապես՝

1) ԵԱՏՄ անդամ չհամարվող պետություններից ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ի վճարման ժամկետի 90 օրով երկարացումը հակասում է Մաքսային միության մաքսային օրենսգրքի դրույթներին: Մաքսային միության մաքսային օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մաքսային միության մաքսային տարածք ապրանքների ժամանման դեպքում՝ այն պահին, երբ ապրանքները հատում են մաքսային սահմանը, փոխադրողի համար առաջանում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորություն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Մաքսային միության մաքսային տարածք ապրանքների ժամանման դեպքում ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման ժամկետ է համարվում այն օրը, երբ ապրանքները հատում են մաքսային սահմանը, եթե ապրանքները չեն հասցվել ժամանման վայր, իսկ, եթե այդ օրը որոշված չէ, ապա ապրանքները ժամանման վայր չհասցնելու փաստը բացահայտելու օրը:

2) «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի անբաժանելի մաս համարվող N 18 հավելվածով սահմանված՝ «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման կարգի և դրանց վճարման

նկատմամբ հսկողության մեխանիզմի մասին» արձանագրության 18-րդ կետի համաձայն՝ ԵԱՏՄ անդամ պետությունների միջև առևտրում անուղղակի հարկերը, բացառությամբ դրոշմավորման ենթակա ենթասակցիզային ապրանքների ակցիզների, վճարվում են ներմուծված ապրանքները հաշվառման վերցնելու ամսվան հաջորդող ամսվա 20-րդ օրվանից ոչ ուշ:

2. Նախագծի ընդունման հիմնավորմամբ ներկայացված՝ շրջանառու միջոցների ավելացման և տնտեսական ակտիվության բարձրացման խնդիրների վերաբերյալ հարկ ենք համարում նշել, որ այդ խնդիրները մշտապես գտնվել են Հայաստանի Հանրապետության կառավարության ուշադրության կենտրոնում և այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրագործել է հեղափոխական քայլեր՝ խնդիրը համակողմանի լուծելու նպատակով: Մասնավորապես՝

1) հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներմուծվող ապրանքների մասով տնտեսվարող սուբյեկտների մոտ լրացուցիչ շրջանառու ֆինանսական միջոցներ ունենալու խնդիրը հատկապես սուր կերպով արտահայտվում է ներդրումային նշանակության ապրանքների (հոսքագծեր, սարքավորումներ և հումքային ապրանքներ) դեպքում (քանի որ ի տարբերություն առևտրային նշանակության ապրանքների, ներդրումային նշանակության ապրանքների համար սահմանին վճարված ԱԱՀ-ի գումարները «օգտագործելու» հնարավորությունն ավելի երկար ժամանակահատվածում են «սահմանափակվում») Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենսդրական նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից»

Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Կ-032-23.06.2017-ՏՀ-011/1 Կ-0321-23.06.2017-ՏՀ-011/1), որն արդեն իսկ ընդունվել է առաջին ընթերցմամբ: Նշված նախագծերով առաջարկվում է ԱԱՀ վճարողների կողմից բոլոր տեսակի մեքենաների, սարքավորումների (բացառությամբ կենցաղային նշանակություն ունեցող) և հումքային ապրանքների ներմուծումն ազատել ԱԱՀ-ից: Նախագծերի ընդունման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ թեև գործող օրենսդրությամբ և 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված են ներդրումային նշանակություն ունեցող ապրանքների (մեքենաներ, սարքավորումներ, հումքային ապրանքներ և այլն) ներմուծման ժամանակ հաշվարկվող ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետի հետաձգման հնարավորություններ, այդուհանդերձ մեր երկրի ներդրումային գրավչության ու տնտեսվարող սուբյեկտների ներդրումային ակտիվության բարձրացման, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների շրջանառու ֆինանսական միջոցների համալրման խնդրի լուծման համար անհրաժեշտ են լրացուցիչ ներդրումային խթաններ: Մասնավորապես, քանի որ ներդրումային նախագծերի կենսացիկլը կարող է ընդգրկել ավելի երկար ժամանակաշրջան, քան գործող օրենսդրությամբ սահմանված՝ ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետի հետաձգման ժամանակաշրջանն է, արդյունքում շատ հաճախ հետաձգված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը լրանում է այն ժամանակ, երբ տնտեսվարող սուբյեկտը դեռևս հնարավորություն չի ունեցել թողարկելու արտադրանք, կուտակելու բավարար շրջանառու միջոցներ հետաձգված հարկային պարտավորությունները մարելու համար.

2) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով հարկ վճարողներին հնարավորություն է ընձեռվել կիսամյակային պարբերականությամբ հետ ստանալ ԱԱՀ-ի գծով դեբետային մնացորդները: Այսինքն, եթե անգամ որևէ տնտեսվարող սուբյեկտ

հնարավորություն չունի ներմուծումներն իրականացնել ներդրումային ծրագրի շրջանակներում՝ ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետի հետաձգմամբ, կամ եթե ներմուծվող ապրանքներն ազատված չեն ԱԱՀ-ից, ապա, մինչև այն է, դրանց մասով վճարված ԱԱՀ-ի գումարները ենթակա են հաշվանցման՝ անկախ այդ ապրանքների իրացման հանգամանքից, և այդ հաշվանցման արդյունքում ձևավորվող դեբետային մնացորդները ենթակա են կիսամյակային պարբերականությամբ հարկ վճարողին հետ վերադարձման:

Այլ կերպ ասած և՛ ներդրումային ապրանքների, և՛ առևտրային ապրանքների ներմուծումների դեպքում տնտեսվարող սուբյեկտների մոտ լրացուցիչ շրջանառու միջոցներ ստեղծելու խնդիրը բովանդակային առումով լուծվել է:

3. Նախագծի ընդունման դեպքում ստեղծվում են հարկման անհավասար պայմաններ տեղական արտադրանքի և ներմուծված արտադրանքի մասով հաշվարկվող ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետների տարբերության առումով: Արդյունքում, ներկայացված առաջարկությունը որոշ դեպքերում կարող է մի կողմից նպաստել ներմուծման ծավալների աճին, մյուս կողմից խոչընդոտել տեղական հումքի արտադրությանը, քանի որ այլ հավասար պայմաններում այդ հումքից տեղական արտադրանք արտադրող տնտեսվարող սուբյեկտներն ավելի շահագրգռված կլինեն նույն արտադրանքն արտադրել իրենց կողմից ներմուծվող հումքից, որի համար ԱԱՀ-ն կվճարվի ներմուծումից հետո 90 օրվա ընթացքում, մինչդեռ տեղական հումքի մասով ԱԱՀ-ն վճարվում է ձեռքբերման պահին կամ կողմերի միջև համաձայնեցված այլ ողջամիտ ժամկետում:

Անփոփելով նշվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ առաջարկության ընդունումն ոչ միայն հակասում է ԵԱՏՄ օրենսդրությանը, այլև չի նպաստի նախագծի առջև դրված նպատակների իրականացմանը: Բացի դրանից, կարծում ենք, որ կատարված օրենսդրական փոփոխությունների և նախաձեռնու-

թյունների շրջանակներում ներմուծողներին ԱԱՀ-ի բեռով չձանրաբեռնելու խնդիրն արդեն իսկ լուծված է:

Առաջարկում ենք նկատի ունենալ նաև, որ նախագծում օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝

1) նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում անհրաժեշտ է «5-րդ կետը» և «6-րդ կետը» բառերը համապատասխանաբար փոխարինել «5-րդ մասը» և «6-րդ մասը» բառերով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 78-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջների.

2) նախագծի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթներն անհրաժեշտ է միավորել ու նախատեսել մեկ հոդվածի տեսքով, քանի որ նշված հոդվածները վերաբերում են օրենսգրքի միևնույն՝ 78-րդ հոդվածին.

3) նախագծի 2-րդ հոդվածից անհրաժեշտ է հանել «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք)» բառերը.

4) նախագծի 3-րդ հոդվածով նախատեսված օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետն անհրաժեշտ է վերանայել՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 444-րդ հոդվածով սահմանված օրենսգիրքն ուժի մեջ մտնելու ժամկետը:

Պ-121-30.08.2017-S<-011/0

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

#### ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 78-րդ հոդվածի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

5. «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրվան հաջորդող 90-րդ օրը ներառյալ՝ որպես հարկային մարմինն վճարվող գումարներ:

**Հոդված 2.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 78-րդ հոդվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

6. ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրվան հաջորդող 90-րդ օրը ներառյալ՝ որպես հարկային մարմինն վճարվող գումարներ, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ եւ 8-րդ մասերով սահմանված դեպքերի:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Նախագծի նպատակը ՀՀ ձեռնարկատիրական եւ ներդրումային միջավայրի բարելավումն է՝ ներմուծման գործընթացում հարկային պարտավորությունների կատարման ժամկետի երկարացմամբ ներմուծող կազմակերպությունների ֆինանսական բեռի թեթեւացման եւ շրջանառու միջոցների սղությունը մեղմելու միջոցով:

Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարների գանձումը սահմանի վրա, իսկ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարների գանձումը մինչեւ ներմուծման օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ լրացուցիչ ֆինանսական բեռ է համարվում ներմուծող կազմակերպությունների համար՝ մինչեւ ներմուծված ապրանքների իրացումն ու վճարված ԱԱՀ գումարների հաշվանցումը: Տնտեսվարող սուբյեկտները, փաստորեն, վարկավորում են պետությանը առանց տոկոսների:

Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներկայացված օրենքի նախագծով (Կ-32-23.06.2017-ՏՀ-011/0) արդեն իսկ նախատեսված հումքային ապրանքներից եւ մեքենաներից, սարքավորումներից բացի՝ մնացած ապրանքների մասով ԱԱՀ վճարման ժամկետի երկարացումը 90 օրով կնպաստի ներմուծող կազմակերպությունների շրջանառու միջոցների ավելացմանը, հետեւաբար նաեւ տնտեսական ակտիվության բարձրացմանը: